ՀԱՐՑԱՇԱՐ

1. Քաղաքացիական իրավունակությունը՝

ա) դադարում է քաղաքացու մահվամբ

բ) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես

գ) քաղաքացիական իրավունքներ ունենալու և դրանց համապատասխան էլ պարտականություններ կրելու ունակությունն է

2. Ստորև նշվածներից որո՞նք են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով գործարքներ՝

ա) անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելը

բ) կտակ կազմելը

գ) օրենքով սահմանված կարգով ամուսնանալը

դ) խանութից համակարգիչ գնելը

3. Գործարքները՝

ա) կարող են լինել միակողմ, երկկողմ կամ բազմակողմ

4. Ո՞ր գործարքներն են համարվում հետաձգող պայմանով կնքված՝

ա) գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞, թե՞ ոչ (օրինակ՝ եթե ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքը գերազանցի XXX-ը)

5. Ո՞ր գործարքներն են համարվում վերացնող պայմանով կնքված՝

ա) գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞, թե՞ ոչ

6. Գործարքի կնքման ինչպիսի՞ ձևեր են նախատեսված ՀՀ օրենսդրությամբ՝

ա) գործարքները կարող են կնքվել բանավոր

բ) գործորքը, որը կարող է կնքվել բանավոր, համարվում է կնքված նաև այն դեպքում, եթե անձի վարքից ակնհայտ է գործարք կնքելու նրա կամքը:

7. Ո՞րն է գործարքի նոտարական ձևը չպահպանելու հետևանքը՝

ա) գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

բ) նման գործարքն առոչինչ է

8. Եթե կողմերից մեկն ամբողջությամբ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, ապա ինչպիսի իրավական պաշտպանության միջոցներ են հասանելի գործարքը կատարած անձին՝

ա) գործարքը կատարած անձը իրավասու է դիմել դատարան, որն էլ իրավունք ունի գործարքը վավեր ճանաչել: Այս դեպքում գործարքի նոտարական վավերացում չի պահանջվում

բ) գործարքը կատարած անձը իրավասու է դիմել դատարան, գործարքի մյուս կողմից՝ անհիմն հարստացման հիմքով պահանջելով նրան հանձնած գույքը (ներառյալ դրամական միջոցները), սակայն հնարավոր է կորցնելով կատարած այլ ծախսերը և կրած այլ վնասները

9. Ինչքա՞ն ժամանակ մի անձը կարող է ներկայացնել այլ անձի՝

ա) լիազորագրում նշված ժամկետում, բայց ոչ ավելի քան երեք տարի

բ) եթե լիազորագրում նշված չէ ժամկետ, ապա լիազորագիրը տալուց մեկ տարվա ընթացքում

10. Ինչպե՞ս են որոշվում գործարքով սահմանված ժամկետները՝

ա) ժամկետը կարող է որոշվել որոշակի օրացույցային տարով, ամսով, ամսաթվով

բ) ժամկետը կարող է որոշվել տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով

գ) ժամկետը կարող է որոշվել այն իրադարձության մատնանշմամբ, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա

11. Ստորև բերվածներից ո՞րն է համապատասխանում ժամանակահատվածով որոշվող ժամկետի ավարտի հաշվարկի մեթոդաբանությանը՝

ա) տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին

բ) կես ամսով որոշվող ժամկետը դիտվում է որպես օրերով հաշվարկվող ժամկետ և համարվում է հավասար տասնհինգ օրվա

12. Քաղաքացիա-իրավական պարտավորությունների ծագման հիմքերն են՝

ա) պայմանագիրը

բ) վնաս պատճառելը

գ) անհիմն հարստացումը

13. Նշվածներից ո՞րն է համապատասխանում դրամական պարտավորությամբ պահանջները մարելու հերթականությունը որոշելու կանոններին՝ դրամական պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում՝

ա) առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված՝ պարտատիրոջ ծախսերը

14. Որտե՞ղ է կատարվում պարտավորությունը, եթե պարտավորության կատարման վայրը որոշված չէ օրենքով, այլ իրավական ակտերով՝

ա) անշարժ գույք հանձնելու պարտավորությունը կատարվում է գույքի գտնվելու վայրում

բ) գույք հանձնելու պարտավորությամբ, որը նախատեսում է դրա փոխադրումը՝ գույքը պարտատիրոջը հասցնելու համար առաջին փոխադրողին հանձնելու վայրում

15. Ե՞րբ է պարտապանն իրավասու կատարել պարտավորությունը, իրենից գանձվելիք գումարը կամ արժեթղթերը նոտարի դեպոզիտ մուծելով՝

ա) եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերն անգործունակ է և ներկայացուցիչ չունի

բ) եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերը խուսափել է կատարումն ընդունելուց կամ թույլ է տվել կետանց

գ) եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ ակնհայտորեն պարզ չէ, թե ով է պարտավորությամբ պարտատերը՝ ներառյալ պարտատիրոջ և այլ անձանց միջև այդ առթիվ վեճի առկայության դեպքում

16. Պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել՝

ա) գրավով

բ) նախավճարով

17. Պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել՝

ա) պարտապանի գույքի պահումով

բ) երաշխավորությամբ

գ) պայմանագրով նախատեսված՝ օրենքին չհակասող ցանկացած այլ եղանակով

18. Ստորև բերված՝ տուժանքի վերաբերյալ պնդումներից, որն է համապատասխանում գործող ՀՀ օրենսդրությանը՝

ա) տուժանքով ապահովվում է միայն իրական պահանջը

բ) դատարանն իրավունք ունի պակասեցնել տուժանքը, եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին

գ) տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից

19. Ի՞նչ է երաշխավորությունը (երաշխավորության պայմանագիրը)՝

ա) երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար

20. Ի՞նչ է երաշխիքը՝

ա) երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս

21. Ի՞նչ է գրավը՝

ա) գրավը (գրավի իրավունքը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար

22. Ո՞ր իրավական նորմերն են կիրառվում խառը պայմանագրի նկատմամբ՝

ա) խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից և խառը պայմանագրի էությունից

23. Ե՞րբ է պայմանագիրը համարվում կնքված՝

ա) պայմանագիրը համարվում է կնքված օֆերտան ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից

բ) ռեալ պայմանագրերը համարվում են կնքված, պայմանագրով նախատեսված գույքը հանձնելու պահից

24. Ե՞րբ է համարվում փոխառության պայմանագիրը կնքված՝

ա) փոխառության պայմանագիրը համարվում է կնքված փոխառության գումարը փոխառուին հանձնելու պահից

25. Ե՞րբ է համարվում բնակարանի առուվաճառքի պայմանագիրը կնքված՝

ա) բնակարանի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված պայմանագրից ծագող իրավունքների գրանցման պահից

26. Ստորև նշված պայմանագրերից որո՞նք են ռեալ պայմանագրեր՝

ա) փոխառության պայմանագիր

բ) պահտվության պայմանագիր

27. Ստորև նշված պայմանագրերից որո՞նք են կոնսենսուալ պայմանագրեր՝

ա) վարկի պայմանագիր

բ) հանձնարարության պայմանագիր

28. Ինչպիսի՞ իրավական կարգավորում գոյություն ունի պայմանագիրը փոփոխելու վերաբերյալ՝

ա) պայմանագրի փոփոխումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով

բ) եթե օրենքով կամ կողմերի համաձայնությամբ թույլատրվում է հրաժարվել պայմանագրից, ապա պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված

29. Ինչ ձևով պետք է կողմերը ամրագրեն պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու իրենց համաձայնությունը՝

ա) պայմանագրի փոփոխման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից

բ) անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կարող է նախատեսել, որ տվյալ պայմանագրի լուծումը կարող է իրականացվել պարզ գրավոր ձևով

30. Ստորև նշված պայմանագրերից, որո՞նք են ենթակա պարտադիր նոտարական վավերացման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ՝

ա) անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը

31. Ստորև նշված գործարքներից որո՞նք են ենթակա պարտադիր նոտարական վավերացման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ՝

ա) պայմանագիր, համաձայն որի ՀՀ քաղաքացի Ա-ն, պարտավորվում է սեփականության իրավունքով ՀՀ քաղաքացի Բ-ին հանձնել XXX հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող ամառանոցը և հարակից այգեգործական հողատարածքը,

բ) պայմանագիր, համաձայն որի, ՀՀ քաղաքացի Ա-ն պարտավորվում է համապատասխան ամսական վճարի դիմաց թույլատրել ՀՀ քաղաքացի Բ-ին իրեն պատկանող հողատարածքի միջով անցկացնել ջրի առու՝ ՀՀ քաղաքացի Բ-ին պատկանող հողատարածքը ջրելու նպատակով

32. Ի՞նչ իրավական հետևանք(ներ) է ունենում անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում դրա գինը չնախատեսելը՝

ա) անշարժ գույքի պայմանագիրը համարվում է չկնքված

33. Որո՞նք են բնակելի տան առուվաճառքի պայմանագրի էական պայմանները՝

ա) բնակելի տան որոշակիորեն սահմանող տվյալները (հասցեն, սեփականության վկայականի համարը և այլն)

բ) բնակելի տան գինը

գ) այն անձանց անվանացանկը, որոնց բնակելի տարածության օգտագործման իրավունքը, մինչև առուվաճառքի պայմանագիրը կնքելը, գրանցված է օրենքով սահմանված կարգով

34. Հողամասի վրա գտնվող սեփական տունը վաճառելիս ինչպես են փոխվում տվյալ հողամասի նկատմամբ անձանց իրավունքները՝

ա) եթե հողամասը վաճառողի սեփականությունն է, ապա սեփական տան նկատմամբ սեփականության իրավունք փոխանցելու հետ միաժամանակ փոխանցվում է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը

բ) եթե հողամասը չի հանդիսանում վաճառողի սեփականությունը, ապա սեփականության իրավունքի փոփոխություն տեղի չի ունենում և գնորդն օգտագործման իրավունք է ձեռք բերում հողամասի համապատասխան մասի նկատմամբ նույն պայմաններով, ինչ ուներ սեփական տունը վաճառողը

35. Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, ե՞րբ է համարվում անշարժ գույքը գնորդին հանձնելու վաճառողի պարտականությունը կատարված՝

ա) անշարժ գույքը հանձնելու պարտավորությունը համարվում է պատշաճ կատարված այդ գույքը գնորդին հանձնելուց և հանձնելու փոխանցման ակտը երկկողմ ստորագրելուց հետո

36. Ե՞րբ է դադարում լիազորագրի գործողությունը՝

ա) լիազորագրի ժամկետը լրացել է

բ) լիազորագրողը վերացրել է այն

գ) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը

37. Ի՞նչ ձևով է տրվում լիազորագիրը (գործարքի ձևը)՝

ա) լիազորագիրը միշտ տրվում է գրավոր ձևով

բ) իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ՝ այդ կազմակերպության կնիքով

38. Երբ է խառը պայմանագիրը ենթակա նոտարական վավերացման՝

ա) խառը պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման, եթե խառը պայմանգրում առկա է նոտարական վավերացում պահանջող այլ առնվազն մեկ պայմանագրի տարրեր

բ) խառը պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, եթե նույնիսկ նրանում չի պարունակվում պարտադիր նոտարական վավերացում պահանջող պայմանագրի տարրեր, սակայն կողմերից որևէ մեկը պահանջում է նոտարական վավերացում

39. Ստորև թվարկվածներից ովքեր են սեփականության իրավունքի սուբյեկտներ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝

ա) քաղաքացիները

բ) Հայաստանի Հանրապետությունը

40. Ի՞նչ է պետական սեփականությունը՝

ա) ցանկացած գույք, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ-ին, պետական սեփականություն է

բ) հողը, որը չի պատկանում քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին, պետական սեփականություն է

41. Ինչպիսի՞ գույքային իրավունքներ կարող են ունենալ սեփականատեր չհամարվող անձինք՝

ա) կառուցապատման իրավունք

բ) սերվիտուտի իրավունք

42. Ինչպիսի՞ գույքային իրավունքներ կարող են ունենալ սեփականատեր չհամարվող անձինք՝

ա) գույքի օգտագործման իրավունք

բ) հոսանքի լարերի անցկացման սերվիտուտ

գ) գրավի իրավունք

43. Ու՞մ սեփականությունն է գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները), եթե այդ մասով բացակայում է որևէ կարգավորում օրենքում, այլ իրավական ակտերում կամ այդ գույքի օգտագործման մասին պայմանագրում՝

ա) գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է այդ գույքը օրինական հիմունքներով օգտագործող անձին

44. Ստորև նշվածներից ո՞րն է գույք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով՝

ա) բնակարան

բ) հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր քառասուն ՀՀ դրամ

գ) ավտոմեքենա

45. Ե՞րբ է առաջանում սեփականության իրավունքը նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ՝

ա) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահից

46. Եթե հեռուստացույցի նվիրատվության պայմանագրով չի նախատեսված նվիրառուի սեփականության իրավունքի ծագման պահը, ե՞րբ է այդ իրավունքը ծագում՝

ա) նվիրառուի սեփականության իրավունքը ծագում է հեռուստացույցը հանձնելու պահից

47. Ստորև թվարկվածներից ո՞ր գույքն է համարվում տիրազուրկ՝

ա) տիրազուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր

բ) տիրազուրկ է համարվում այն գույքը, որի սեփականատերը հրաժարվել է դրանից

48. Ի՞նչ եղանակով կարող է անձը դառնալ այն շարժական գույքի սեփականատերը, որից սեփականատերը հրաժարվել է՝

ա) դեն նետված գույքի նկատմամբ, եթե այդ գույքը գտնվում է անձին պատկանող հողամասում, ջրավազանում կամ այլ օբյեկտում և այդ գույքի արժեքը ակնհայտորեն ունի 50000 ՀՀ դրամից ցածր արժեք, անձը կարող է ստանալ սեփականության իրավունք՝ ձեռնամուխ լինելով դրա օգտագործմանը

բ) դեն նետված գույքի նկատմամբ, եթե այդ գույքի արժեքը գերազանցում է 50000 ՀՀ դրամը, անձը կարող է ձեռք բերել սեփականության իրավունք, եթե այդ անձի դիմումի հիման վրա դատարանը գույքը ճանաչի տիրազուրկ

49. Ու՞մ սեփականության իրավունքն է ճանաչվում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ՝

ա) նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է համայնքի սեփականությունը

50. Եթե այլ բան նախատեսված չէ համակարգչի առուվաճառքի պայմանագրով, որ պահից է գնորդը դառնում համակարգչի սեփականատեր՝

ա) համակարգչի համար վճարելու պահից

51. Գույքի ապառիկ վաճառքի դեպքում հնարավոր է արդյոք գնի վերահաշվարկ՝ հաշվի առնելով վաճառված գույքի գնի հետագա փոփոխությունները՝

ա) գնի հետագա փոփոխությունները հիմք են վերահաշվարկ կատարելու համար, եթե դա նախատեսված է պայմանագրով

52. Ինչպե՞ս կարող է կնքվել անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը՝

ա) անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է նոտարական վավերացման

53. Ընդհանուր կանոնի համաձայն ինչպե՞ս կարող է արտահայտվել ակցեպտը՝

ա) ակցեպտը կարող է արտահայտվել օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմաններ կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելու միջոցով

բ) ակցեպտը կարող է արտահայտվել օֆերտային պատասխան ուղարկելու միջոցով, որում նշվում է որ առաջարկը ընդունվում է լրիվ և անվերապահորեն

54. Ի՞նչ է ռենտան (ռենտայի պայմանագիրը)՝

ա) ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար

55. Ստորև թվարկված պայմանագրերից ո՞րն է համարվում նվիրատվության պայմանագիր՝

ա) պայմանագիր, համաձայն որի ՀՀ քաղաքացի Ա-ն պարտավորվում է պայմանագիրը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում անհատույց ՀՀ քաղաքացի Բ-ին սեփականությանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մերսեդես մակնիշի ավտոմեքենան

56. Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում է արգելվում նվիրատվությունը՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի որևէ տեսուչին կատարված նվիրատվությունը՝ նրա կողմից իրականացվող ստուգման առնչությամբ

բ) «ԱԱԱ» ՍՊ Ընկերության «ԲԲԲ» ԲԲ Ընկերությանը տաս համակարգիչների նվիրատվությունը՝ համապատասխան ներքին ընթացակարգերը ամբողջությամբ օրենսդրությանը համապատասխան իրականացնելու պայմանով

գ) անգործունակ ճանաչված ՀՀ քաղաքացի Բ-ի անունից նրա օրինական ներկայացուցչի կատարած նվիրատվությունը

57. Ո՞ր դեպք(եր)ում նվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապագայում նվիրառուին գույք կամ իրավունք փոխանցելու խոստում կատարելու պայմանագիրը կատարելուց (հրաժարվել նվիրատվության պայմանագիրը կատարելուց)՝

ա) նվիրատուն իրավունք ունի հրաժարվել նվիրատվության պայմանագիրը կատարելուց, եթե պայմանագիրը կնքելուց հետո նվիրատուի գույքային կամ ընտանեկան դրությունը այնքան է վատթարացել, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում

58. Եթե հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետ պայմանագրում որոշված չէ, ի՞նչ ժամկետով է համարվում վարձակալության պայմանագիրը կնքված՝

ա) պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով

59. Ինչպե՞ս կարող է լուծվել անորոշ ժամկետով կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ պայմանագրում դրա մասին դրույթների բացակայության դեպքում՝

ա) կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել անշարժ գույքի վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին երեք ամիս առաջ տեղեկացնելով

60. Ո՞ր դեպքում և ո՞ր պայմաններով է արգելվում կնքել ենթավարձակալության պայմանագիր՝

ա) վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության միայն վարձատուի համաձայնությամբ

61. Ու՞մ սեփականությունն են համարվում վարձակալած գույքի բաժանելի բարելավումները, վարձակալության պայմանագրում դրանց մասին դրույթների բացակայության դեպքում՝

ա) վարձակալի

62. Ու՞մ սեփականությունն են համարվում վարձակալած գույքի անբաժանելի բարելավումները, վարձակալության պայմանագրում դրանց մասին դրույթների բացակայության դեպքում՝

ա) անբաժան բարելավումները վարձատուի սեփականությունն են, սակայն եթե անբաժան բարելավումները իրականացվել են վարձատուի համաձայնությամբ, ապա վարձակալն իրավունք ունի դրանց համար փոխհատուցում ստանալ

բ) անբաժան բարելավումները վարձատուի սեփականությունն են, և եթե դրանք իրականացվել են առանց վարձատուի համաձայնության, ապա այդ բարելավումների արժեքը չի հատուցվում

63. Ի՞նչ է տեղի ունենում, երբ վարձակալած անշարժ գույքը օտարվում է՝

ա) վարձակալության հանձնված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը դադարացնելու համար: Վարձակալության պայմանագիրը շարունակում է գործել նոր սեփականատիրոջ և վարձակալի միջև նույն պայմաններով

64. Ինչպե՞ս կարող է սահմանվել վարձավճարը՝

ա) վարձավճարը սահմանվում է որպես պարբերաբար կամ միաժամանակ վճարվող որոշակի կայուն գումար

բ) վարձավճարը սահմանվում է որպես վարձակալի կողմից որոշակի ծառայություններ մատուցելու պարտականություն

գ) վարձավճարը կարող է սահմանվել վարձակալված գույքը բարելավելու համար պայմանագրով նախատեսված ծախսերը վարձակալի վրա դնելու միջոցով

65. Ի՞նչ ձևով պետք է կնքվի շինության վարձակալության պայմանագիրը՝

ա) շինության վարձակալության պայմանագիրը պարտադիր պետք է կնքվի գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչը ենթակա է նոտարական վավերացման

66. Ի՞նչը կարող է լինել ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկան՝

ա) տրանսպորտային միջոց

բ) անշարժ գույք

67. Ֆինանսական վարձակալության պայմանագրում գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի մասին դրույթների բացակայության մասին, ո՞ր պահից է այդ ռիսկը անցնում վարձակալին՝

ա) վարձակալած գույքը վարձակալին հանձնելու պահից

68. Ու՞մ իրավունք չունի անհատույց օգտագործման հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը առևտրային կազմակերպությունը՝

ա) առևտրային կազմակերպությունն իրավունք չունի գույքն անհատույց հանձնել իր հիմնադրին կամ մասնակցին

բ) առևտրային կազմակերպությունն իրավունք չունի գույքն անհատույց օգտագործման հանձնել իր կառավարման կամ վերահսկողության մարմինների անդամներին

69. Ինչպիսի՞ իրավական հետևանքներ ունի փոխատուի՝ գույքը անհատույց օգտագործման պայմանագրի համաձայն հանձնելուց հրաժարվելը՝

ա) այդ դեպքում փոխառուն իրավունք ունի պահանջել լուծել գույքի անհատույց օգտագործման պայմանագրի և հատուցել իր կրած վնասները

70. Ո՞վ է կրում անհատույց օգտագործման հանձնված գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգման պարտականությունը, պայմանագրում դրա մասին դրույթների բացակայության դեպքում՝

ա) ինչպես հիմնական, այնպես էլ ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է փոխառուն

71. Ի՞նչ ձևով պետք է կնքվի համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգ) պայմանագիրը՝

ա) ֆրանչայզինգի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր ձևով

բ) ֆրանչայզինգի պայմանագիրը կարող է կնքվել գրավոր օֆերտայի և ակցեպտի փոխանակման միջոցով

72. Նշվածներից որո՞նք են առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք՝

ա) կոմանդիտային ընկերակցություն

բ) բաց բաժնետիրական ընկերություն

73. Նշվածներից որո՞նք են ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք՝

ա) հիմնադրամ

բ) հասարակական միավորում

74. Նշվածներից որո՞նք են ակցեսոր պարտավորություններ՝

ա) գրավը

բ) տուժանք վճարելու պարտավորությունը

75. Ո՞վ կարող է լինել գույքի գրավատու՝

ա) գույքի սեփականատերը

76. Ո՞վ կարող է լինել գրավատու՝

ա) գրավատու կարող է լինել հիմնական պարտավորությամբ պարտապանը

բ) գրավատու կարող է լինել հիմնական պարտավորության հետ կապ չունեցող ցանկացած երրորդ անձ

77. Ի՞նչը չի կարող լինել գրավի առարկա՝

ա) գրավի առարկա չի կարող լինել ալիմենտի պահանջը

բ) գրավի առարկա չի կարող լինել շրջանառությունից հանված գույքը

78. Ո՞ր դեպքում է հնարավոր վարձակալության իրավունքի գրավը՝

ա) վարձակալության իրավունքը կարող է գրավադրվել միայն գույքի սեփականատիրոջ համաձայնությամբ

79. Նշվածներից որո՞նք են գրավի տեսակներ՝

ա) կոշտ գրավ

բ) հիփոթեք

80. Նշվածներից ո՞ր տեղեկություններն են պարտադիր գրավի պայմանագրում նշման համար՝

ա) կողմերի անունները (անվանումները) և բնակության (գտնվելու) վայրերը

բ) գրավով ապահովված պարտավորության էությունը, չափը և կատարման ժամկետները

գ) գրավի առարկան

81. Ի՞նչ հերթականությամբ են բավարարվում գրավառուների պահանջները հաջորդող գրավի դեպքում, եթե որևէ օրենքով հատուկ կարգավորում նախատեսված չի՝

ա) սկզբում բավարարվում է նախորդ գրավառուի պահանջները

82. Ե՞րբ է ծագում գրավի իրավունքը գրավականի դեպքում՝

ա) գրավի առարկան գրավառուին հանձնելու պահից, սակայն ոչ շուտ քան պայմանագիրը կնքելը

83. Ինչպի՞սի իրավունքներ ունի գրավադրված գույքի նկատմամբ դրա սեփականատերը, եթե գրավի պայմանագրով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ՝

ա) գրավատուն իրավունք ունի գրավի առարկան օտարել

բ) գրավատուն իրավունք ունի գրավի առարկան կտակել

գ) գրավատուն իրավունք ունի գրավի առարկան տրամադրել վարձակալության կամ անհատույց օգտագործման

84. Ի՞նչ իրավական հետևանքներ է ունենում այն դեպքում, երբ գրավի առարկա գույքն օրենքով սահմանված կարգով առգրավվել է գրավատուից՝ բռնագանձում տարածելու միջոցով կամ որպես հանցագործության համար պատժամիջոց՝

ա) գրավառուն իրավունք է ստանում պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը

բ) գրավառուն ունի այդ գույքից իր պահանջը բավարարելու նախապատվության իրավունք

գ) գրավառուն իրավունք է ստանում պահանջել գրավատուից, ողջամիտ ժամկետում գրավի առարկան փոխարինել այլ հավասարարժեք գույքով

85. Ե՞րբ է դադարում գրավը՝

ա) գրավով ապահովված պարտավորության դադարելով

բ) գրավ դրված գույքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգով իրացվելու (վաճառելու) դեպքում

86. Ինչպե՞ս կարող են իրականացվել դրամական միջոցների գրավը՝

ա) գրավի առարկա դրամական միջոցները կարող են պահվել բանկի դեպոզիտային հաշվում

բ) գրավի առարկա դրամական միջոցները կարող են պահվել նոտարի դեպոզիտային հաշվում

87. Նշվածներից ո՞րն է կոշտ գրավ՝

ա) կոշտ գրավ է համարվում այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով

բ) կոշտ գրավ է համարվում այն գրավը, որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցված է օրենքով սահմանված կարգով

88. Նշվածներից ո՞րն է հիպոթեք՝

ա) հիպոթեք է համարվում անշարժ գույքի գրավը

բ) հիպոթեք է համարվում հողամասի կառուցապատման գրավը

89. Նշվածներից որո՞նք են հիպոթեքի պայմանագրի էական պայմաններ՝

ա) հիփոթեքի առարկան, որը որոշվում է պայմանագրում դրա անվանման, գտնվել վայրի նշումով և այդ առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ

բ) հիփոթեքով ապահովված պարտավորության էությունը, չափը և կատարման ժամկետը

90. Ի՞նչ հիմքերով են դադարում պարտավորությունները՝

ա) պատշաճ կատարմամբ

բ) միատեսակ հանդիպական պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով, ընդ որում բավական է կողմերից որևէ մեկի հայտարարությունը

գ) պարտավորությունը դադարում է պարտապանի և պարտատիրոջ համընկնման դեպքում

91. Ի՞նչ իրավունքներ կարող են ծագել անձի մոտ ձեռքբերման վաղեմության հիմքով՝ կախված գույքի տեսակից և այլ պայմաններից՝

ա) սեփականության իրավունք

բ) սեփականության ձեռքբերման նախապատվության իրավունք

գ) օգտագործման իրավունքի նախապատվության իրավունք

92. Նախնական պայմանագիրը՝

ա) կնքվում է ապագայում պայմանագիր կնքելու պարտավորվածության ամրագրմամբ

բ) եթե չի պարունակում ժամկետ, ապա հիմնական պայմանագիրը պետք է կնքվի նախնական պայմանագիրը կնքելու պահից մեկ տարվա ընթացքում

93. նախնական պայմանագիր կնքած կողմի՝ հիմնական պայմանագիր կնքելուց խուսաելու դեպքում՝

ա) մյուս կողմն իրավունք ունի պահանջել խուսափող կողմից իրեն պատճառված վնասները

բ) կողմն իրավասու է դիմել դատարան հարկադրելու կնքելու հիմնական պայմանագիրը

94. Պայմանագիրը փոփոխելու և/կամ լուծելու էական հանգամանք են՝

ա) հանգամանքների փոփոխությունն առաջացել է այնպիսի պատճառներով, որոնք շահագրգիռ կողմը չի կարող վերացնել դրանք ծագելուց հետո

բ) պայմանագրի կատարումն առանց դրա պայմանների փոփոխման այնքան կխախտեր կողմերի՝ պայմանագրին համապատասխանող գույքային շահերի հարաբերակցությունը և շահագրգիռ կողմին զգալի վնաս կպատճառեր

95. Վարչական դատարան դիմելու իրավունք ունի՝

ա) յուրաքանչյուր անձ եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից խոչընդոտներ են հարուցվել անձի իրավունքների և ազատությունների իրականացման համար

96. Ի՞նչ հիմքերով կարող է կատարվել ժառանգությունը՝

ա) ըստ կտակի

բ) ըստ օրենքի

97. Նշված դեպքերում, երբ է ժառանգությունը կատարվում ըստ օրենքի՝

ա) եթե չկա կտակ

բ) եթե կտակում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը

98. Ի՞նչ է մտնում ժառանգության զանգվածի մեջ՝

ա) ժառանգության զանգվածի մեջ մտնում է ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները

99. Ե՞րբ է բացվում ժառանգությունը՝

ա) Ժառանգությունը բացվում է քաղաքացու մահվան օրը

բ) Ժառանգությունը բացվում է քաղաքացուն մահացած ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում

100. Ո՞րն է ժառանգության բացման վայրը՝

ա) ժառանգության բացման վայրը ժառանգատուի վերջին բնակության վայրն է

բ) եթե քաղաքացու բնակության վայրը արտասահմանում է կամ անհայտ է և ժառանգական զանգվածը ներառում է ՀՀ-ում գտնվող անշարժ գույք, ապա ժառանգության բացման վայրը այդ անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրն է

101. Ո՞վ կարող է լինել ըստ կտակի ժառանգ՝

ա) ժառանգության բացման օրը կենդանի քաղաքացիներ

բ) ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացելուց հետո կենդանի ծնված քաղաքացիներ

գ) միջազգային կազմակերպությունները

102. Ո՞վ կարող է լինել ըստ օրենքի ժառանգ՝

ա) ժառանգության բացման օրը կենդանի քաղաքացիներ

բ) ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացելուց հետո կենդանի ծնված քաղաքացիներ

103. Ովքե՞ր են մեկուսացվում ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգությունից՝ (անարժան ժառանգներ)

ա) ըստ կտակի ժառանգությունից մեկուսացվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողները, որոնց ծնողական իրավունքները չեն վերականգնվել ժառանգության բացման ժամանակ

բ) ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը

գ) ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուի հնարավոր ժառանգներից որևէ մեկին

104. Ո՞վ կարող է դիմել դատարան անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով՝

ա) նույն հերթի այլ ժառանգները

105. Ի՞նչ եղանակով կարող է քաղաքացին կտակ անել՝

ա) կտակը պետք է արվի անձամբ

106. Քանի՞ անձի կարգադրություն կարող է պարունակել կտակը՝

ա) կտակը կարող է պարունակել միայն մեկ անձի կարգադրություն

107. Ո՞րն է կտակի ազատության սկզբունքի բովանդակությունը՝

ա) քաղաքացին կարող է իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները՝ սահմանափակվելով միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով

բ) քաղաքացին կարող է վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը

108. Ո՞վ ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝

ա) ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները

բ) ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունի ժառանգատուի ամուսինը, ով օրենքով սահմանված կարգով ճանաչված է հաշմանդամ

109. Ի՞նչ է ժառանգության պարտադիր բաժինը՝

ա) ժառանգության պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կես, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում

110. Ստորև նշվածներից ովքե՞ր են ենթաժառանգներ՝

ա) ենթաժառանգները, այն անձինք են, որոնք նշված են կտակում այն դեպքի համար, եթե կտակարարի նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգության բացվելը

բ) ենթաժառանգները, այն անձինք են, որոնք նշված են կտակում այն դեպքի համար, եթե հիմնական ժառանգը, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարվի կտակարարի օրինաչափ պայմանները

111. Ի՞նչ պայման է իրավասու դնել կտակարարը պայմանով կտակում՝

ա) կտակարարն իրավունք ունի ժառանգություն ստանալը պայմանավորել ժառանգի վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով

112. Ի՞նչ գույք իրավունք ունի կտակել կտակարարը՝

ա) կտակարարն իրավունք ունի կազմել ցանկացած՝ ինչպես կտակը կազմելու ժամանակ սեփականության իրավունքով իրեն պատկանող, այնպես էլ ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ կարգադրություն պարունակող կտակ

113. Ի՞նչ կարգով է բաշխվում ժառանգական գույքի չկտակված մասը՝

ա) կտակարարի գույքի չկտակված մասը բաշխվում է ըստ օրենքի ժառանգների միջև, որոնք ժառանգության են հրավիրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72 գլխով սահմանված կարգով, ընդ որում այդ գույքի ըստ օրենքի ժառանգմանը մասնակցում են նաև այն ժառանգները, ովքեր ըստ կտակի ժառանգել են գույքի մնացած մասը

114. Ո՞ր դեպքում կտակարարն իրավունք ունի ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգներին՝

ա) կտակարարն իրավունք ունի առանց պատճառների բացատրության ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգին, բացառությամբ, եթե այդ ժառանգը, ժառանգության բացման օրը, պարտադիր բաժնի իրավունք ունի

115. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ կտակարարն ամբողջությամբ կամ համապատասխան մասով վերացնում է հետագա կտակը, որով նա վերացրել էր նախկինում կազմված կտակը՝

ա) հետագա կտակով վերացված կտակը չի վերականգնվում

116. Ի՞նչ ձևով կարող է կազմվի կտակը՝

ա) կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի կողմից և վավերացվի նոտարի կողմից

բ) հեռավոր այն բնակավայրերում, որտեղ չկա նոտար, ապրող անձանց կտակները կազմվում են գրավոր՝ նշելով կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվում է կտակարարի կողմից և կարող են վավերացվել համայնքի ղեկավարի կողմից

117. Ի՞նչ է փակ կտակը՝

ա) փակ կտակը, դա այն կտակն է, որը կտակարարի ցանկությամբ նոտարը վավերացնում է առանց դրա բովանդակության հետ ծանոթանալու

118. Նշվածներից որո՞նք են պարտադիր փակ կտակը վավերացնելիս՝

ա) փակ կտակը պետք է գրի և ստորագրի անձամբ կտակարարը
բ) իրեն հանձնված ստորագրված ծրարը նոտարը դնում է մեկ այլ ծրարում, փակում (սոսնձում) է այն և վրան կատարում վավերացնող մակագրություն
գ) փակ կտակ վավերացնելիս, նոտարը պարտավոր է կտակարարին պարզաբանել ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը

119. Այն դեպքերում, երբ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան կտակը կազմելիս, ստորագրելիս կամ վավերացնելիս պետք է ներկա լինեն վկաներ, ո՞վ իրավասու չի հանդես գալ որպես վկա՝

ա) նոտարը
բ) անգրագետ և կտակը կարդալ չկարողացող անձինք
գ) այն անձի ծնողները, ում օգտին կազմվել է կտակը

120. Ի՞նչ է ենթադրում կտակի գաղտնիության սկզբունքը՝

ա) կտակի գաղտնիությունը դա նոտարի, կտակը վավերացնող այլ անձի, վկաների, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակն ստորագրած քաղաքացու պարտականությունն է մինչև ժառանգության բացելը չհրապարակել տեղեկություններ կտակը կազմելու, այն վավերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին

բ) կտակի գաղտնիությունը դա նոտարի, կտակը վավերացնող այլ անձի, վկաների, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակն ստորագրած քաղաքացու պարտականությունն է մինչև ժառանգության բացելը չհրապարակել տեղեկություններ կտակի բովանդակության մասին

121. Ստորև բերված կտակի մեկնաբանման միջոցներին վերաբերվող որ պնդումներն են ճիշտ՝

ա) կտակը առաջնահերթ պետք է մեկնաբանվի ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից

բ) կտակում պարունակվող որևէ դրույթի տառացի իմաստը պարզ չլինելու դեպքում այն որոշվում է այդ դրույթը կտակի այլ դրույթների և ամբողջ կտակի իմաստի հետ համադրելու միջոցով

122. Ի՞նչ հետևանք(ներ) է ունենում դատարանի կողմից կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրությունը անվավեր ճանաչելը՝

ա) կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրության անվավերությունը չի հանգեցնում կտակի մնացած մասի անվավերության

123. Ի՞նչ հիմքերով կարող է կտակը անվավեր ճանաչվել՝
ա) կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները խախտելու հետևանքով

բ) կտակն անվավեր է ճանաչվում կտակը կազմելու վայրը և ժամանակը կտակում նշված չլինելու դեպքում

124. Ինչպե՞ս է նշանակվում կտակակատարը՝

ա) կտակարարը կարող է կտակում նշել անձին՝ ում հանձնարարում է կտակի կատարումը, ընդ որում անհրաժեշտ է այդ անձի՝ օրենքով նախատեսված կարգով տրված, որպես կտակակատար հանդես գալու համաձայնությունը

բ) ժառանգները կարող են իրենց համաձայնությամբ կտակի կատարումը հանձնարարել իրենցից մեկին

125. Ի՞նչ պարտավորություններ ունի կտակակատարը՝

ա) կտակակատարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել ժառանգության պահպանման և կառավարման համար

բ) կտակակատարը պարտավոր է ստանալ ժառանգատուին հասանելիք գումարները և այլ գույքը

126. Ո՞ր դեպքում և ի՞նչ չափով կտակակատարն իրավունք ունի ստանալ վարձատրություն կամ ծախսերի հատուցում՝

ա) կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում, ինչպես նաև՝ վարձատրություն ստանալու իրավունք ունի

127. Որ դեպքերում են համապատասխան հերթի ժառանգները ժառանգության իրավունք ձեռք բերում՝

ա) նախորդ հերթի ժառանգների բացակայության դեպքում

բ) նախորդ հերթի ժառանգների կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում

գ) նախորդ հերթի ժառանգների կողմից ժառանգությունից հրաժարվելու դեպքում

128. Առաջին հերթի ժառանգներ չեն՝

ա) ժառանգատուի եղբայրը
բ) ժառանգատուի հայրական կողմի պապը

գ) ժառանգատուի քրոջ երեխաները ներկայացման իրավունքով

129. Երկրորդ հերթի ժառանգներ են՝

ա) ժառանգատուի քույրը

բ) ժառանգատուի եղբոր երեխաները ներկայացման իրավունքով

130. Երրորդ հերթի ժառանգներ են՝

ա) Ժառանգատուի հայրական կողմի տատը

բ) Ժառանգատուի մայրական կողմի պապը

130. Երրորդ հերթի ժառանգներ են՝

ա) ժառանգատուի հայրական կողմի տատը

բ) ժառանգատուի մայրական կողմի պապը

131. Չորրորդ հերթի ժառանգներ չեն՝

ա) ժառանգատուի մայրական կողմի տատը

132. Ովքեր են դասվում ըստ օրենքի ժառանգների թվին

ա) ժառանգատուի խնամքի տակ առնվազն մեկ տարի գտնվող անաշխատունակ անձը

133. Ժառանգատուի խնամքի տակ գտնվող անաշխատունակ անձինք, որ հերթի ժառանգների հետ են ժառանգում՝

ա) այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է հրավիրվում

134. Նշվածներից որոնք են դասվում երկրորդ հերթի ժառանգների թվին՝

ա) ժառանգատուի համամայր քույրը

բ) ժառանգատուի եղբայրը

գ) ժառանգատուի համահայր եղբոր երեխան ներկայացման իրավունքով

135. Նշվածներից որոնք են դասվում չորրորդ հերթի ժառանգների թվին ՝

ա) ժառանգատուի հորեղբոր որդին ներկայացման իրավունքով

բ) ժառանգատուի հորաքույրը

136. Ըստ օրենքի ժառանգի բաժինը անցնում նրա երեխաներին, եթե

ա) ըստ օրենքի տվյալ ժառանգը մահացել է մինչև ժառանգության բացումը

137. Ժառանգատուի ժառանգության զանգվածի մեջ չի մտնում՝

ա) ժառանգատուի ամուսնու գույքը, որը նա ձեռք է բերել մինչև ամուսնությունը

բ) ժառանգատուի ամուսնու գույքը, որը նա ստացել է որպես նվեր ամուսնության ընթացքում

գ) ժառանգատուի ամուսնու բաժինը ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքում

138. Նշվածներից որոնք են դասվում առաջին հերթի ժառանգների թվին՝

ա) ժառանգատուի ծնողները

բ) ժառանգատուի որդեգրված երեխաների զավակները ներկայացման իրավունքով

գ) ժառանգատուի որդեգրողը

139) Նշվածներից որոնք են դասվում երրորդ հերթի ժառանգների թվին՝

ա) ժառանգատուի որդեգրողի ծնողները

բ) ժառանգատուի մայրական կողմի տատը

140. Որ դեպքերում է ժառանգվող գույքը ճանաչվում անժառանգ՝

ա) եթե բոլոր ժառանգները մեկուսացվել են ժառանգությունից,

բ) եթե չկան ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ

141. Ում սեփականությանն է անցնում անժառանգ գույքը

ա) ժառանգության բացման վայրի համայնքի

142. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա երբ է ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված համարվում՝

ա) երբ ժառանգը փաստացի տիրապետել կամ կառավարել է ժառանգված գույքը

բ) երբ ժառանգը իր հաշվին կատարել է գույքը պաշտպանելու ծախսեր

գ) երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանելու համար

143. Ինչ եղանակով է կատարվում ժառանգության ընդունումը ժառանգի կողմից

ա) ժառանգի համապատասխան դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին անձամբ հանձնելով

բ) եթե այլ բան ապացուցված չէ, ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի կառավարելով

գ) եթե այլ բան ապացուցված չէ, ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելով

144. Որ դեպքերում է կարող ժառանգը առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու սահմանված ժամկետից հետո

ա) եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը

145. Ինչ է տեղի ունենում, երբ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը ժառանգության բացումից հետո չի հասցնում այն ընդունել՝

ա) տվյալ ժառանգին հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին

146. Որ դեպքերում առաջին ժառանգը չի կարող հրաժարվել ժառանգությունից

ա) ժառանգության բացման օրվանից ութ ամիս հետո

բ) ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո

147. Նշվածներից որոնք են ճիշտ՝

ա) ժառանգին հասանելիք ժառանգության մասից հրաժարվել չի թույլատրվում

բ) չի թույլատրվում ժառանգությունից վերապահումով կամ պայմանով հրաժարվելը

148. Հօգուտ ում ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից

ա) ըստ կտակի ժառանգի

բ) ըստ օրենքի ցանկացած հերթի ժառանգների

149. Ինչ ժամկետում ժառանգատուի պարտատերերը իրավունք ունեն ներկայացնել իրենց պահանջներ ՝

ա) ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, եթե արդեն ընդունել է ժառանգությունը

150. Նշվածներից որը չի մտնում ժառանգության զանգվածի մեջ՝

ա) պետական պարգևները

բ) պետական շքանշանները

151. Ժառանգությունը բաժանելու վերաբերյալ ժառանգների համաձայնության բացակայության դեպքում՝

ա) ժառանգությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն բաժանում է դատարանը

152. Ինչ միջոցներ է ձեռնարկում նոտարը ժառանգությունը պահպանելու համար ՝

ա) կատարում է ժառանգական զանգվածի գույքագրում

բ) ժառանգության զանգվածի մեջ մտնող թանկարժեք քարերից պատրաստված գույքը պահատվության համար հանձնում է բանկ

գ) ժառանգության զանգվածի մեջ մտնող կանխիկ դրամը մուծում է նոտարի դեպոզիտ

153. Եթե ժառանգության իրավունքի վկայագիր տալուց հետո ի հայտ է եկել այնպիսի գույք, որի համար վկայագիր չի տրվել, ապա՝

ա) տրվում է ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր

154) Ժառանգության հետ կապված, որ ծախսերն են հատուցվում առաջին հերթին

ա) մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած ծախսերը

155) Ի՞նչ է կատարվում ժառանգության զանգվածում առկա կառավարման կարիք ունեցող գույքի հետ՝

ա) կառավարման կարիք ունեցող գույքի նկատմամբ նոտարը, որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում հավատարմագրային կառավարման պայմանագիր

156. Ստորև թվարկվածներից ո՞րն է նկարագրում նոտարի կարգավիճակը ՀՀ-ում՝

ա) Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է Նոտարիատի մասին ՀՀ օրենքով նախատեսված գործողություններ և ծառայություններ

157. Նշվածներից որո՞նք են նոտարի անկախության երաշխիքները՝

ա) Օրենքով արգելվում է նոտարական գործողությունների իրականացման ժամանակ միջամտել կամ ներգործել նոտարի գործունեությանը

բ) Նոտարական գործունեություն իրականացնող նոտարների հաստիքները չեն կարող կրճատվել

158. Նշվածներից որո՞նք են ճիշտ նկարագրում նոտարի իրավական պաշտպանության սկզբունքը՝

ա) Նոտարի աշխատանքային վայրը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ նոտարական պալատի ներկայացուցչի մասնակցությամբ

բ) Նոտարի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն ՀՀ գլխավոր դատախաղը:

գ) Նոտարն ազատվում է վարժական հավաքներից:

159. Ո՞րն է նոտար նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն կրթական ցենզը՝

ա) Իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում:

160. Ո՞վ է իրականացնում անձանց նշանակումը նոտարի պաշտոնում

ա) Նոտարի պաշտոնում նշանակումը կատարում է արդարադատության նախարարը:

161. Ի՞նչ գործունեություն չի կարող իրականացնել նոտարը նոտարական գործունեությանը զուգահեռ

ա) Նոտարը իր գործունեությանը զուգահեռ չի կարող զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն:

բ) Նոտարը կարող է ազատորեն իրականացնել մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեություն՝ ներառյալ վճարովի հիմունքներով

162. Ի՞նչ իրավական ռեժիմ է կիրառվում նոտարական գործողությունների նկատմամբ՝

ա) Կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

163. Ի՞նչ իրավական ռեժիմ է կիրառվում նոտարի մատուցած վճարովի ծառայությունների նկատմամբ՝

ա) Կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

164. Ո՞ր դեպքում է կասեցվում նոտարի գործունեությունը՝

ա) Նոտարի գործունեությունը կասեցվում է, եթե նոտարը դատական կարգով ճանաչվել է անվճարունակ՝ անվճարունակության ողջ ժամանակահատվածում

բ) Նոտարի գործունեությունը կասեցվում է, եթե նա երեք ամիս անընդմեջ չի վճարել նոտարական պալատին վճարվող անդամավճարները

165. Ի՞նչ իրավական հետևանքներ ունի նոտարի գործունեության կասեցումը

ա) Գործունեությունը կասեցված նոտարը, մինչև կասեցման ժամկետի ավարտն իրավունք ունի իրականացնել նոտարական ցանկացած գործունեություն, բացառությամբ նոտարական գործողությունների կատարումը

բ) Նոտարի կնիքը պահվում է Հայաստանի Հանրապետության նոտարական պալատում

166. Ո՞ր դեպքում է նոտարը պարտադիր գործից ազատվում՝

ա) Երբ նա դիմում է այդ մասին

բ) Երբ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան վեց ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի:

գ) Դատական կարգով ճանաչվել է սնանկ:

դ) Նրա նկատմամբ առկա է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից ընդունված վարչական ակտը, որով հիմնավորվում է, որ նոտարը չի վճարել հարկերը:

167. Ո՞ր դեպքում կարող է նոտարը գործից ազատվել՝

ա) Եթե նոտարի վավերացրած գործարքը վավերացման պահին եղել է առ ոչինչ

բ) Եթե մեկ տարվա ընթացքում երեք անգամ նոտարը վավերացրել է գործարք կամ հաստատել է փաստաթուղթ, որը վավերացման կամ հաստատման պահին եղել է անվավեր

168. Ո՞վ է իրականացնում նոտարի իրականացրած նոտարական գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը՝

ա) Արդարադատության նախարարությունը:

169. Ի՞նչ կարգով կարող է նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնել արդարադատության նախարարությունից բացի այլ մարմին՝

ա) Նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ մարմինը նոտարի մոտ ստուգումներ կատարելուց առաջ այդ մասին պետք է հայտնի արդարադատության նախարարին և նոտարական պալատ

բ) Նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ մարմինը պետք է արդարադատության նախարարին և նոտարական պալատ ուղարկեն ստուգման արդյունքների վերաբերյալ ակտերի (արձանագրությունների) պատճենները:

170. Ովքե՞ր են իրավասու Հայաստանի Հանրապետության անունից նոտարական գործողություններ կատարել այլ պետությունների տարածքում

ա) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ:

բ) Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները:

171. Ի՞նչ պատասխանատվություն է առաջացնում նոտարական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ տեղեկությունները նոտարի նշած ժամկետում նոտարին չներկայացնելը՝

ա) Նշված խախտումը առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով դատարանների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար սահմանված կարգով

172. Ո՞վ է սահմանում նոտարի աշխատանքային ռեժիմը՝

ա) Նոտարի աշխատանքային ռեժիմը սահմանում է նոտարը, որը վերահսկում է արդարադատության նախարարությունը

173. Ստորև նշվածներից ի՞նչ է պարտավոր անել նոտարը՝

ա) Նոտարը պարտավոր է չբացահայտել նոտարական գաղտնիքը, բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի

բ) Նոտարը պարտավոր է նոտարական գրասենյակի հասցեն փոխելիս այդ մասին հինգ օր առաջ հայտնել արդարադատության նախարարություն և նոտարական պալատ

174. Ի՞նչ կարգապահական տույժ կարող է կիրառվել նոտարի նկատմամբ՝

ա) Խիստ նկատողություն

բ) Նախազգուշացում

175. Որո՞նք են նոտարի կարգապահական պատասխանատվության հիմքերը՝

ա) Իր նոտարական տարածքից դուրս գրասենյակ բացելը, բացառությամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով հստակ նախատեսված դեպքերի

բ) Նոտարի կողմից օրենք չհանդիսացող այլ իրավական ակտի (ենթաօրենսդրության) խախտում թույլ տալը

176. Ի՞նչ սկզբունքների հիման վրա է գործում նոտարական պալատը՝

ա) Ինքնակառավարման սկզբունք

բ) Նոտարների պարտադիր անդամակցության սկզբունք

177. Ո՞վ է ընդունում նոտարական պալատի կանոնադրությունը՝

ա) Նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է նոտարական պալատը

178. Ո՞րն է նոտարական պալատի բարձրագույն մարմինը՝

ա) Նոտարական պալատի բարձրագույն մարմինը նոտարական պալատի անդամների ժողովն է

179. Կազմակերպությունների ի՞նչ իրավական ռեժիմ է տարածվում նոտարական պալատի նկատմամբ (կանոնադրությանը առաջադրվող պահանջները և գրանցման կարգը)՝

ա) Հասարակական կազմակերպությունների

180. Ե՞րբ է անձը դառնում նոտարական պալատի անդամ՝

ա) Նոտարը նոտարական պալատի անդամ է դառնում պաշտոնում նշանակվելու օրվանից

181. Ի՞նչ է նախաձեռնում նոտարական պալատը իր խնդիրները իրականացնելու համար՝

ա) Նոտարական պալատը արդարադատության նախարարություն է ներկայացնում նոտարների գործունեությանն առնչվող օրենքների առաջարկներ

բ) Նոտարական պալատը նոտարական պրակտիկայի միասնականության ապահովման նպատակով ամփոփում է նոտարների գործունեության արդյունքները

գ) Նոտարական պալատը կազմակերպում է նոտարների ուսուցման և որակավորման բարձրացման գործը

182. Ստորև թվարկվածներից որո՞նք են պատկանում նոտարական պալատի բացառիկ իրավասությանը՝

ա) Նոտարական պալատի տարեկան հաշվետվության հաստատումը

բ) Նոտարական պալատի անդամների անդամավճարների չափի հաստատումը

183. Ո՞ր դեպքում է նոտարը կրում գույքային պատասխանատվություն՝

ա) Նոտարը գույքային պատասխանատվություն է կրում միայն իր կողմից դիտավորությամբ թույլ տված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառած վնասի համար

184. Ի՞նչպիսի պարտականություն ունի նոտարը հաշվետվություններ ներկայացնելու մասով՝

ա) Նոտարը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ արդարադատության նախարարություն հաշվետվություն ներկայացնել նոտարական գործունեության մասին

բ) Նոտարը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ նոտարական պալատ ներկայացնել արդարադատություն ներկայացվող հաշվետվության մեկ օրինակ:

185. Քանի՞ օգնական կամ այլ աշխատողներ կարող է ունենալ նոտարը՝

ա) Նոտարի աշխատողների քանակը որոշում է նոտարը, առանց որևէ սահմանափակման

186. Ստորև նշվածներից ո՞վ կարող է նշանակվել նոտարի օգնականի պաշտոնում՝

ա) 30 տարեկան, իրավաբանության բակալավրի և իրավաբանության մագիստրոսի գիտական աստիճան ստացած կինը, ով չունի դատվածություն:

187. Քանի՞ ստաժոր կարող է առավելագույնը ունենալ նոտարը՝

ա) Ստաժորների թիվը չի կարող գերազանցել երկուսը

188. Ի՞նչ իրավասություններ ունի նոտարի օգնականը՝

ա) Նոտարի օգնականը իրավասու է իրականացնել քաղաքացիների ընդունելություն

բ) Նոտարի օգնականը իրավասու է իրականացնել նոտարական պրակտիկայի ամփոփում

գ) Նոտարի օգնականը իրավասու է իրականացնել արխիվի հետ աշխատանք

189. Ի՞նչ իրավասություններ ունի նոտարի ստաժորը՝

ա) Նոտարի ստաժորը իրավասու է ուսումնասիրել քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն

բ) Նոտարի ստաժորը իրավասու է իրականացնել գործարքների նախագծերի կազմում

190. Ստորև բերվածներից ի՞նչ գործողություններ է իրականացնում նոտարը՝

ա) վավերացնում է լիազորագրեր

բ) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր

գ) հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը

դ) կազմակերպությունների դիմումները փոխանցում է այլ կազմակերպությունների

ե) դեպոզիտ է ընդունում դրամական գումար

191. Ո՞ր դեպքում նոտարը իրավունք չունի կատարել նոտարական գործողություններ՝

ա) Նոտարը իրավունք չունի կատարել նոտարական գործողություններ իր պապի կամ տատի անվամբ և անունից

բ) Նոտարը իրավունք չունի կատարել նոտարական գործողություններ տվյալ նոտարական գրասենյակի աշխատողների անվամբ և անունից

192. Ի՞նչ իրավական հետևանք ունի նոտարի կողմից իր ամուսնու անվամբ և անունից նոտարական գործողության կատարելը՝

ա) Տվյալ գործարքը առոչինչ է՝

բ) Տվյալ գործարքը վավեր է, եթե այդ գործարքը իրականացվել է հրապարակային սակարկությունների միջոցով

193. Ի՞նչ պահանջներ են առաջադրվում նոտարական գործողություններ կատարելու համար ներկայացվող փաստաթղթերին՝

ա) Նշված փաստաթղթերի վրա պարտադիր պետք է նշված լինի դրանք կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը

բ) Նշված փաստաթղթերը չպետք է պարունակեն ջնջումներ կամ էական վնասվածքներ, կամ հավելագրումներ

194. Ինչի՞ հիման վրա է ստուգվում ֆիզիկական անձի ինքնությունը՝

ա) Անձի ինքնությունը կարող է ստուգվել անձնագրով

բ) Անձի ինքնությունը կարող է ստուգվել զինվորական գրքույկով

195. Ինչպե՞ս է որոշվում կազմակերպության իրավունակությունը և գործունակությունը՝

ա) Կազմակերպության իրավունակությունը և գործունակությունը որոշվում՝ ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավաբանական անձի կանոնադրության պահանջներից:

196. Ի՞նչ եղանակով է հայերենին չտիրապետող անձը մասնակցում նոտարական գործողություններին՝

ա) Հայերեն լեզվին չտիրապետող անձը նոտարական գործողություններին կարող է մասնակցել թարգմանչի միջոցով

197. Նոտարը ՝

ա) հաստատում է քաղաքացու նույնությունը լուսանկարում պատկերված անձի հետ

բ) հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը

գ) հաստատում է քաղաքացու՝ ողջ լինելու հանգամանքը

198. Նոտարն իրավունք ունի ընդունել՝

ա) օրենքին չհակասող ցանկացած փաստաթուղթ

199. Ինչպե՞ս է որոշվում նոտարի վավերացրած փաստաթղթի օրինակների քանակը՝

ա) Նոտարի վավերացրած փաստաթղթի օրինակների քանակը որոշում են դրանց վավերացման համար դիմած անձինք, սակայն դրանք պետք է կազմվեն առնվազն երկու օրինակից

200. Ինչպե՞ս է որոշվում նոտարի մոտ պահվող և գործարքի մասնակիցներին տրված փաստաթղթի օրինակների միջև գերակայության հարցը՝

ա) Նոտարի մոտ պահվող օրինակը համարվում է փաստաթղթի բնօրինակ, իսկ բնօրինակի և մյուս օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին

201. Նոտարը վավերացնում է՝

ա) այն գործարքները, որոնց համար օրենքով նախատեսված է պարտադիր նոտարական ձև

բ) այն գործարքները, որոնց համար օրենքով նախատեսված չէ պարտադիր նոտարական ձև, սակայն կողմերից մեկը պահանջում է գործարքի նոտարական վավերացում

202. Նոտարը վավերացնում է՝

ա) գործունակ անձանց կտակները

203. Կտակարարից կտակվող գույքի նկատմամբ կտակը վավերացնելիս նոտարը՝

ա) իրավունք չունի պահանջել կտակվող գույքի նկատմամբ կտակարարի սեփականության կամ այլ իրավունքը հաստատող ապացույցներ

204. Ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին տրվում է ՝

ա) ժառանգության բացման վայրի նոտարին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա

բ) Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով

գ) Քաղաքացիական օրենսգրքով սահմանված ժամկետներում

205. Գույքը ժառանգության իրավունքով համայնքին անցնելու դեպքում ժառանգության իրավունքի վկայականը՝

ա) տրվում է համայնքի ղեկավարին

բ) Երևանի դեպքում տրվում է Երևանի քաղաքապետին

206. Ժառանգության վկայագիր տալու դեպքում նոտարը ստուգում է՝

ա) ժառանգատուի մահվան փաստը

բ) ժառանգության բացման ժամանակը

գ) ժառանգության բացման վայրը

207. Նոտարը, վավերացնելով ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը՝

ա) չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը

բ) միայն հավաստում է, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ

208. Նոտարը վավերացնում է փաստաթղթի թարգմանության իսկությունը, եթե՝

ա) նա տիրապետում է համապատասխան լեզուներին

բ) եթե փաստաթուղթը թարգմանված է նոտարի վստահված թարգմանչի կողմից

209. Նոտարը պարտավոր է՝

ա) պահպանել դեպոզիտ ստացված դրամը կամ արժեթղթերը

210. Անձի պահանջով նոտարը պարզում է ՝

ա) փաստաթուղթը ներկայացրած անձի ինքնությունը

բ) փաստաթուղթը ստացող անձի ինքնությունը

211. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար՝

ա) պարտավոր են հոգ տանել

բ) իրավունք ունեն հոգ տանել

212. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ՝

ա) դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

213. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում՝

ա) օտարերկրյա քաղաքացիները

բ) քաղաքացիություն չունեցող անձինք

214. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ քաղաքացիության իրավունք ունի այն երեխան՝

ա) որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է

բ) որի ծնողներից միայն մեկը ՀՀ քաղաքացի չէ

215. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք ունեն՝

ա) ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը

216. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն՝

ա) դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում

217. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են՝

ա) հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար:

218. Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները՝

ա) չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ

219. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը՝

ա) հետադարձ ուժ չունեն

220. Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը՝

ա) հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով

221. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինչպիսի պետություն է՝

ա) ինքնիշխան

բ) ժողովրդավարական

գ) իրավական

222. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է՝

ա) ժողովրդին

223. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝

ա) մարզերը

բ) համայնքները

գ) Երևանը

224. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝

ա) կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով

225. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը՝

ա) Երևանն է

226. Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են՝

ա) հանրաքվեի միջոցով

227. Սահմանադրության հետևյալ դրույթներից որոնք փոփոխման ենթակա չեն՝

ա) Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է

բ) Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին

228. Օրենքները հանրաքվեի են դրվում՝

ա) Ազգային ժողովի առաջարկով

բ) կառավարության առաջարկով

229. Ազգային ժողովը՝

ա) նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ

բ) ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների

գ) ընտրում է մարդու իրավունքների պաշտպանին

230. Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը՝

ա) սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով

231. Պետական նոտարական գրասենյակում ստաժավորում անցնողի պաշտոնում նշանակումը կատարվում է՝

ա) արդարադատության նախարարի հրամանով

բ) ստաժորների թեկնածուների որակավորումն ստուգող հանձնաժողովի առաջարկության հիման վրա

232. Նոտարները հաշվառման են կանգնում՝

ա) այն հարկային տեսչությունում, որի սպասարկման տարածքում է գտնվում նոտարի նոտարական տարածքը

233. Նոտարները հարկային հաշվառման կանգնելու համար հարկային տեսչություն են ներկայացնում՝

ա) նոտարի ծառայողական վկայականի պատճեն

բ) նոտարի կողմից լրացված՝ հվհհ տրամադրման դիմումը

234. Յուրաքանչյուր փաստաթուղթ նոտարի մոտ գրանցվում է՝

ա) միայն մեկ անգամ

235. Եթե գործավարությունը չի իրականացվում նոտարի կողմից, ապա՝

ա) ստացված բոլոր փաստաթղթերը գրանցումից հետո զեկուցվում են նոտարին

236. Նոտարի բոլոր ծառայողական փաստաթղթերը՝

ա) կազմվում են նրա ձևաթղթի վրա

237. Նոտարի մոտ թողնվում են՝

ա) լիազորագրերը կամ դրանց պատճենները

բ) վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ ենթավարձակալության պայմանագրեր վավերացնելիս

238. Նոտարի կողմից վավերացված կամ տրված փաստաթղթերի կորստյան դեպքում տրվում է՝

ա) կորած փաստաթղթի կրկնօրինակը

239. Մշտական պահպանության գործերի համար կազմվում է՝

ա) ցուցակ

240. Նոտարական գրանցամատյանում գրանցումները պետք է կատարվեն՝

ա) հայերենով

241. Եթե նոտարի ճզմիչ կնիքը վնասվում է՝

ա) նոտարը վնասված կնիքը հանձնում է նախարարության համապատասխան ստորաբաժանում

242. Նոտարի կողմից իր գրասենյակից դուրս նոտարական գործողություններ կատարելու դեպքում՝

ա) կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափով

243. Նոտարի կողմից թույլ տրված գրավրիպակների ուղղումը կատարվում է՝

ա) անվճար

244. Նոտարի թեկնածուների ուսուցման դասընթացների ծրագրերը հաստատվում են՝

ա) արդարադատության նախարարի կողմից

245. Նոտարի թեկնածուն համարվում է ուսուցման դասընթացը չավարտած, եթե՝

ա) նա բացակայել է դասընթացի ավելի քան մեկ երրորդը

246. Ուսուցման դասընթացն ավարտած նոտարի թեկնածուին իրավաբանական ինստիտուտի կողմից տրվում է՝

ա) ուսուցման վկայագիր

247. Նոտարի կողմից փաստաթուղթն առանձին քաղաքացիների հասցեագրելիս՝

ա) սկզբից ցույց է տրվում փոստային հասցեն

բ) փոստային հասցեից հետո ցույց է տրվում հասցեագրվող քաղաքացու ազգանունը

248. Նոտարի կողմից փաստաթուղթը միաժամանակ մի քանի հասցեատերերի ուղարկվելու դեպքում՝

ա) ստորագրվում են դրա բոլոր օրինակները

249. Նոտարի կողմից տրամադրվող փաստաթղթի կրկնօրինակը պետք է բովանդակի՝

ա) վավերացված կամ տրված փաստաթղթի ամբողջ տեքստը

250. Նոտարի մոտ փաստաթղթերի պահպանության նախապատրաստելու հետ միաժամանակ՝

ա) կատարվում է ոչնչացման ենթակա փաստաթղթերի ընտրություն

251. Անձանց մոտ ե՞րբ է ծագում հողամասի սեփականության իրավունքը՝

ա) պետական գրանցման պահին

252. Անձանց մոտ ե՞րբ է ծագում հողամասի օգտագործման իրավունքը՝

ա) օգտագործման իրավունքի պետական գրանցման պահից

253. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ո՞ր հողամասերն է արգելվում քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել՝

ա) պատմական և մշակութային արժեքների օբյեկտներ

բ) զբաղեցված են պետական սեփականություն հանդիսացող անտառով

գ) վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը

254. Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդրված հողամասի սեփականության իրավունքը ե՞րբ է անցնում իրավաբանական անձին՝

ա) հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո

255. Ձեռք բերման վաղեմության ուժով ինչպիսի՞ իրավունք կարող է ծագել պետական կամ համայնքային հողամասի նկատմամբ, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասի ձեռք բերելը՝

ա) քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար և, եթե հողամասերը համապատասխանում են սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին

բ) ձեռք բերման վաղեմության ուժով պետական կամ տեղական կառավարման մարմնի կողմից անձանց նկատմամբ կարող է ճանաչվել սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքը

256. Որո՞նք են հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների դադարման հիմքերը՝

ա) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում

բ) հողամասն օտարելիս

գ) սեփականատիրոջ մահվան դեպքում, եթե չկան ժառանգներ

257. Հողամասը ինչպիսի՞ սերվիտուտով կարող է ծանրաբեռնվել՝

ա) հողամասով անցնելու կամ երթևեկելու համար

բ) հողամասով էլեկտրահաղորդման, կապի գծերի, ջրամատակարարման և գազամատակարարման խողովակաշարերի անցկացման, շահագործման և վերանորոգման համար

գ) հողամասից ջուր վերցնելու համար

258. Ո՞ր օրենքով է սահմանվում հողամասերի նկատմամբ պետական գրանցման (և գրանցման մերժման) կարգը՝

ա) հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և դրա մերժման կարգը սահմանվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

բ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով

259. Իրավաբանական անձի կողմից հողամասերի տնօրինման մասին որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող մարմինները՝

ա) հողամասերը վարձակալության հանձնելու, կանոնադրական կապիտալում ներդնելու, փոխանակելու մասին որոշումն ընդունում է անդամների (մասնակիցների) ընդհանուր ժողովը կամ կանոնադրությամբ լիազորված մարմինը

բ) հողամասի նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը, անդամների (մասնակիցների) ընդհանուր ժողովի կամ կանոնադրությամբ լիազորված մարմնի որոշումները հիմք են գործարքի կնքման ու դրա պետական գրանցման համար

գ) մարզպետները

260. Բաժնետիրական ընկերությունը՝

ա) առևտրային կազմակերպություն համարվող տնտեսական ընկերակցությունն է

բ) ունի կանոնադրական կապիտալ, որը բաժանված է որոշակի թվով հասարակ, արտոնյալ և այլ բաժնեմասերի

գ) կարող է լինել բաց, փակ

261. Բաժնետիրական ընկերության կողմից գույք ձեռք բերելու կամ օտարելու դեպքում՝

ա) եթե այն խոշոր գործարք չէ, և դրա արժեքը չի գերազանցում, ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը, ապա դրա վերաբերյալ որոշումն ընդունում է ընկերության գործադիր մարմնի ղեկավարը

բ) եթե գործարքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարք կնքելու որոշումն ընդունվում է ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից

գ) եթե գործարքի արժեքը չի գերազանցում ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը, ապա գործարք կնքելու որոշումն ընդունվում է խորհրդի կողմից

262. Բաժնետիրական ընկերության ժողովն իրավասու է՝

ա) եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի 50 տոկոսից ավելին

263. Բաժնետիրական ընկերության ժողովի արձանագրության մեջ պարտադիր պետք է նշվի՝

ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը

բ) միայն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը

գ) ժողովի նախագահը, ընկերության տնօրենը, ժողովի քարտուղարը, հրավիրված անձինք, ինչպես նաև օրակարգը

264. Բաժնետիրական ընկերության Խորհուրդը՝

ա) իրավասու է պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխում կատարել, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ

265. Բաժնետիրական ընկերության Խորհուրդ պետք է ստեղծվի՝

ա) եթե ընկերությունում առկա են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերեր, որոնց քանակը գերազանցում է 50-ը

266. Բաժնետիրական ընկերության տնօրենը՝

ա) տալիս է լիազորագրեր

266. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վարույթում ընդհանուր իրավասության դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ ինչպիսի՞ գործեր է քննում՝

ա) գործեր, որոնք վերաբերվում են անձանց ազգակցական հարաբերություններին

բ) գործեր, որոնք վերաբերվում են ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ապահարզանի և մահվան գրանցմանը

գ) ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին

258. Որ՞ն է Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննության անհրաժեշտ պայմանը՝

ա) դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր

բ) դիմողը ողջամտորեն պնդում է, որ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը

269. Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերի վարույթում որո՞նք են դիմում առաջադրվող պահանջները՝

ա) որդեգրել ցանկացող անձի (անձանց) ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը

բ) որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և բնակության վայրը

գ) որդեգրել ցանկացող անձի (անձանց) ցանկության դեպքում նրա (նրանց) միջնորդությունը՝ որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և վայրը փոփոխելու, իրեն (իրենց) որպես որդեգրվող երեխայի ծնող (ծնողներ) գրառելու մասին

270. Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու գործերի վարույթում ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիմումի քննությունը՝

ա) դատարանը դիմումը քննում է դիմողի, ծնողներից մեկի (որդեգրողների, հոգաբարձուի) կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ

271. Ընդհանուր իրավասության դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

ա) վեճը ենթակա չէ դատարանում քննության

բ) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ

գ) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ

272. Ընդհանուր իրավասության դատարանը հակընդդեմ հայցն ընդունում է, եթե՝

ա) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը

բ) հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը

գ) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը

273. Ընդհանուր իրավասության դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե՝

ա) նշանակել է փորձաքննություն

բ) պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ

գ) Գործին մասնակցող իրավաբանական անձը վերակազմակերպվում է

274. Որո՞նք են ընդհանուր իրավասության դատարանի կողմից կիրառվող սանկցիաները՝

ա) նախազգուշացում

բ) նիստերի դահլիճից հեռացնելը

275. Ընդհանուր իրավասության դատարանը կիրառում է արագացված դատաքննություն, եթե՝

ա) հայցն ակնհայտ հիմնավոր է

բ) հայցն ակնհայտ անհիմն է

276. Ե՞րբ է ուժի մեջ մտնում ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը՝

ա) ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն որպես կանոն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո

բ) եթե գումարը բռնագանձելու պահանջի մասին կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում հիսուն հազար ՀՀ դրամը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից

277. Պետական գրանցման են ենթակա՝

ա) նոր ստեղծված իրավաբանական անձը

բ) իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունները և վերջինիս կառավարման բարձրագույն մարմնի որոշումները

գ) իրավաբանական անձի լուծարումը

դ) իրավաբանական անձի սնանկությունը

ե) կառավարման բարձրագույն մարմնի կազմի, տնօրենների խորհրդի կազմի, տնօրենի փոփոխությունները

զ) իրավաբանական անձի վերակազմակերպումը

278. Իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի որոշման, արձանագրության քաղվածքը պետք է ամբողջությամբ և սպառիչ պարունակի՝

ա) նիստի գումարման օրվա և վայրի մասին տեղեկություններ

բ) նիստի օրակարգի վերաբերյալ տեղեկությունները

279. Պետական գրանցամատյանում գրառվում են՝

ա) հիմնադրման եղանակը

բ) կանոնադրական կապիտալի չափը

գ) իրավաբանական անձի խորհրդի, տնօրենների խորհրդի կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ

280. Անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրառվում են՝

ա) պետական հաշվառման վկայականի սերիան և համարը

բ) անհատ ձեռնարկատիրոջ փոխկապակցված անձանց տվյալները

281. Ինչ փաստաթղթեր չեն ներկայացվում նոր ստեղծված իրավաբանական անձի գրանցման համար՝

ա) կանոնադրության առնվազն հինգ օրինակ

բ) գործադիր մարմնի ղեկավարի լուսանկար

282. Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման դեպքում ներկայացվում են՝

ա) տեղեկանք հարկային և մաքսային մարմինների կողմից պետական բյուջեի հանդեպ

բ) պարտավորությունների բացակայության մասին տեղեկանք ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, եթե լուծարվող ընկերությունը մենաձնորի կամ գերիշխող դիրք ունեցող իրավաբանական անձ է

283. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը իր անունից ձեռք բերել՝

ա) գույքային, անձնական և անձնական ոչ գույքային բնույթի իրավունքներ և կրել պարտականություններ

բ) իր անվանումը կամ ֆիրմային անվանումը պարունակող ձևաթղթեր, խորհրդանիշ, ապրանքային նշան

284. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվը՝

ա) կարող է լինել 2 անձից բաղկացած

բ) կարող է լինել 1 անձից բաղկացած

285. Եթե ՍՊԸ մասնակիցների թիվը գերազանցում է 49-ը, ապա՝

ա) վերակազմավորվել առևտրային կոոպերատիվի

286. ՍՊԸ կանոնադրական կապիտալը՝

ա) նվազագույն չափ չի սահմանվում

բ) չպետք է պակաս լինի ընկերության ակտիվների չափից

287 Նոտարը պետք է իմանա և հետևի՝

ա) լատինական նոտարիատի միջազգային միության սկզբունքներին և դրույթներին

288. Ըստ ՀՀ Նոտարական էթիկայի կանոնների, նոտարը պետք է հարգի՝

ա) իր նախարարությունը

բ) պետական իշխանության մարմիններին

գ) իրավական համակարգի իր գործընկերներին

289. ՀՀ Նոտարական էթիկայի կանոններից բխում է, որ՝

ա) նոտարական գրասենյակում հաստատել բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ

290. Նոտարական գործողություններ կատարելիս նոտարը չպետք է՝

ա) ենթարկվի երրորդ անձանց կողմից ճնշման

բ) ենթարկվի քաղաքական ազդեցության

գ) ցուցաբերի կողմնակալություն

291. Նոտարը պարտավոր է՝

ա) տարին մեկ անգամ, ոչ պակաս քան երեք շաբաթով ձևակերպել իր արձակուրդը

բ) օգնել և մասնագիտական փորձը փոխանակել երիտասարդ գործընկերների հետ

292. Ըստ ՀՀ Նոտարական էթիկայի կանոնների՝ նոտարի բարոյական պարտքն է՝

ա) դիմակայել նոտարի վրա գործադրվող ճնշմանը

բ) ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս հասցնել նոտարի մասնագիտական գործունեությանը

293. Նոտարի կարգապահական պատասխանատվություն է համարվում՝

ա) օրենսդրությանը հակասող նոտարական գործողություն կատարելը

բ) նոտարական գործունեությամբ զբաղվելը՝ առանց մասնագիտական պատասխանատվության ռիսկի ապահովագրության

գ) նոտարական պալատի անդամավճար չմուծելը երեք և ավելի ամիս (անընդմեջ)

294. Նոտարի կարգապահական պատասխանատվության միջոցներ չեն՝

ա) նախազգուշացումը

բ) նկատողությունը

գ) խիստ նկատողությունը

295. Նոտարին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ որոշում ընդունում է՝

ա) նոտարական պալատը

296. Նոտարի խրախուսման միջոցներն են՝

ա) շնորհակալություն

բ) գործուղում միջազգային միջոցառումներին մասնակցելու համար

գ) պատվոգիր

297. Դատարանն իրավունք ունի կիրառել՝

ա) միջազգային պայմանագրեր

բ) գործարար շրջանառության սովորույթներ

298. Դատարանը կայացնում է՝

ա) գործն ըստ էության լուծող դատական ակտեր

բ) գործն ըստ էության չլուծող դատական ակտեր

գ) վճարման կարգադրություն

299. Դատավարության կողմերն են՝

ա) հայցվորն ու պատասխանողը

300. Անպատշաճ կողմի փոխարինումը՝

ա) տեղի է ունենում միայն հայցվորի համաձայնությամբ

301. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք՝

ա) կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմից մինչև գործով դատաքննություն սկսվելը

բ) ճանաչվում են այդպիսին և մուտք են գործում գործի մեջ, եթե գործով կայացվող վճիռը կարող է նրանց վրա վճարման պարտավորություն առաջացնել

302. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ՝

ա) լրացուցիչ ապացույցներ ներկայացնել դատաքննության ընթացքում, եթե մինչև դատաքննությունը անկախ իրենց

կամքից չեն կարողացել դրանք ներկայացնել և առկա է եղել անհնարինություն

303. Փորձաքննություն նշանակվում է՝

ա) կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ

304. Դատական հանձնարարություններ՝

ա) դրանք տեղի են ունենում միայն դատարանի որոշմամբ, երբ օտարերկրյա պետության տարածքում անհրաժեշտ է ապացույց հայթայթել

բ) պարտադիր են այն ստացած դատարանի համար, որը նա կատարում է անհապաղ

305. Պետական տուրք վճարվում է՝

ա) հայցադիմումների համար

բ) հայցի հիմք և առարկա փոփոխելու համար

306. Հայցը հարուցվում է՝

ա) պատասխանողի գտնվելու կամ բնակության վայրում

բ) պատասխանողի առավել արժեքավոր գույքի գտնվելու վայրում, եթե պատասխանողի գտնվելու վայրն անհայտ է

307. Հայցում նշվում են՝

ա) հայցապահանջը հաստատող ապացույցները

բ) հայցվորի հասցեն, էլեկտրոնային հասցեն, հեռախոսի համարը, պատասխանողի երկու կամ ավելի հասցե, այլ տեղեկություններ

գ) հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման

308. Հայցի ապահովման միջոցներ են՝

ա) Պատասխանողին ՀՀ սահմաններից դուրս գալուն արգելելը

բ) գույքի իրացումը կասեցնելը

309. Գործի վարույթի կասեցման պարտադիր հիմքեր են՝

ա) գործին մասնակցող անձի մահից հետո վիճելի իրահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն

310. Վիճարկման հայցով՝

ա) Հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակի վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը

311. Վարչական դատարանին հայցը կարող է ներկայացվել՝

ա) երկու ամսյա ժամկետում, եթե հայցվորը պահանջում է վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը

312. Գործողության կատարման հայցը դատարան է ներկայացվում՝

ա) եռամսյա ժամկետում՝ այն պահից, երբ վարչական մարմին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու վերաբերյալ

313. Հայցադիմումին պատասխան ներկայացնելը...՝

ա) կողմի պատասխան չներկայացնելը կարող է գնահատվել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում

314. Վարչական դատարան կարող են բողոքարկվել՝

ա) նոտարի գործողությունը, բացառությամբ գործարքի վավերացման գործողության

315. Պետական գրանցման են ենթակա՝

ա) շարժական գույքի գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքը

բ) հիպոթեքը

316. Սահմանափակումների պետական գրանցման հիմք են՝

ա) վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող որոշումը

բ) քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշումը

317. Գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից ՝

ա) ամուսինների, երեխաների և խնամքի տակ գտնվող այլ անձանց իրավունքները, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, եթե նույնիսկ դրանք առանձին չեն գրանցվել

բ) ՀՀ օրենսդրությամբ ընդհանուր կանոն և արգելք /առողջապահական, պաշտպանական և այլն/ սահմանող սահմանափակումները

318. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում ինչ չի նշվում՝

ա) գրանցված իրավունքի սուբյեկտների անունները /անվանումները/ և այլ անհատականացնող տվյալները

բ) բոլոր անշարժ գույքերի միավորի հասցեն և համապատասխան համայնքի /տեղանքի/ անվանումը

319. Տրանսպորտային միջոցի հետ կապված գործարքները կարող են իրականացվել՝

ա) միայն տրանսպորտային միջոցի սեփականության վկայականի առկայության դեպքում

բ) առանց տրանսպորտային միջոցի պետական գրանցումն իրականացրած ստորաբաժանման կողմից տրված սահմանափակումների տեղեկանքի, եթե գործարքի կողմերից և ոչ մեկը չի պահանջում այն ներկայացնել

320. Տրանսպորտային միջոցի հետ կապված գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝

ա) գործարքը ստորագրելու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում

321. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմնի բացառիկ լիազորություն չէ՝

ա) խոշոր գործարքների կնքումը

բ) ընկերության աուդիտորի ընտրությունը

322. ՍՊԸ-ում խոշոր գործարք կատարելու որոշում ընդհանուր ժողովն ընդունում է՝

ա) եթե գործարքը վերաբերում է ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելուն, որի արժեքը գերազանցում է խոշոր գործարք կատարելու մասին որոշման ընդունման պահին ընկերության զուտ ակտիվների 25 տոկոսը ու եթե ընկերության կանոնադրությամբ նածատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ:

323. ՍՊԸ-ի կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը հիմնադիրները պետք է ընդունեն՝

ա) միաձայն

324. ՍՊԸ-ի կանոնադրությունը պարտադիր պետք է պարունակի՝

ա) ընկերության անվանումը

բ) ընկերության գտնվելու վայրը

325. ՍՊԸ-ի պետական գրանցումն իրականացվում է՝

ա) մշտական գործող մարմնի վայրով

բ) մշտական գործող մարմնի՝ ընկերության կանոնադրությամբ սահմանված գործադիր մարմնի վայրով

326. Վարչական դատարան կարող է բողոքարկվել՝

ա) նոտարի այն գործողությունները, որոնք իրենցից գործարքի վավերացում չեն ներկայացնում

327. Վիճարկման հայցի դեպքում հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝

ա) երկամսյա ժամկետում, այն պահին հաջորդող օրվանից սկսած, երբ համապատասխան վարչական ակտը առձեռն հանձնվել է հայցվորին

328. Պարտավորեցման հայց վարչական դատարանին կարող է ներկայացվել՝

ա) երկամսյա ժամկետում այն պահից սկսած, երբ լրացել է վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը

բ) մեկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է վարչական ակտի ընդունումը

329. Գործողության կատարման հայց վարչական դատարանին կարող է ներկայացվել՝

ա) մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից

բ) եռամսյա ժամկետում այն պահից սկսած, երբ վարչական մարմնին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու համար

330. Վարչական դատարանում հայցադիմումի պատասխան ներկայացվում է՝

ա) հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում

331. Վարչական դատարավարությունում հայցի հիմքը կամ առարկան ՝

ա) կարող է փոփոխվել, եթե այն չի բերում հայցի էության փոփոխության

բ) կարող է փոփոխվել մինչև դատաքննություն նշանակելը

գ) կարող է փոփոխվել մինչև դատաքննություն նշանակելը գործը քննող դատարանի ընդդատության սահմաններում

332. Բաժնետիրական ընկերությունը՝

ա) ունի կանոնադրական կապիտալ, որը բաժանված է որոշակի թվով հասարակ, արտոնյալ բաժնեմասերի

333. Բաժնետիրական ընկերության ստեղծման գրավոր պայմանագիրը պետք է բովանդակի՝

ա) ընկերության կանոնադրական կապիտալի չափը

բ) յուրաքանչյուր հիմնադրի կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը

334. Որ հարցերով որոշումներն են ընդունվում բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովի մասնակիցների ձայների 3/4-ով՝

ա) բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատումը

բ) ընկերության կանոնադրական կապիտալի չափը

335. Բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխություններ կամ լրացումներ կատարելը տեղի է ունենում՝

ա) ժողովին մասնակցած քվեարկող բաժնետոմսի սեփականատերերի ձայների 3/4-ով

բ) ժողովին մասնակցած քվեարկող բաժնետոմսի անվանատերերի ձայների 3/4-ով

336. Բաժնետիրական ընկերությունը՝

ա) կարող է թողարկել հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր

337. Բաժնետիրական ընկերությունը իրավունք ունի որոշում կայացնել շահութաբաժնի վճարման մասին՝

ա) կիսամյակային, եռամսյակային, տարեկան կարգով

338. Բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանում է՝

ա) խորհուրդն իր որոշմամբ

339. Բաժնետերերի տարեկան ժողով գումարվում է ՝

ա) ամեն տարի

բ) ֆինանսական տարին ավարտվելուց հետո ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետում

գ) կանոնադրությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում

340. Բաժնետիրական ընկերության ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Ընկերության խորհրդին՝

ա) ընկերության գործադիր մարմնի ձևավորումը

բ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը

341. Եթե բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ, ապա քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի 3/4-ով են ընդունվում՝

ա) ընկերության վերակազմակերպումը

բ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը

գ) բաժնետոմսերի համախմբումը /կոնսոլիդացիան/

342. Հեռակա քվեարկություն՝

ա) չի կարող անցկացվել, եթե անց է կացվում տարեկան ժողով

բ) կարող է անցկացվել և դրա արյդունքում էլ ընդունված որոշումը ունի օրինական ուժ, եթե քվեարկությանը մասնակցել է բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին

343. Պետական հաշվառման համար անհատ ձեռնարկատերը գործակալություն է ներկայացնում՝

ա) դիմում

344. Ամուսնական պայմանագիր՝

ա) կարող է կնքվել միայն մինչև ամուսնության պետական գրանցումը

բ) կարող է կնքվել ամուսնության ցանկացած ժամանակահատվածում

գ) կարող է կքնվել գրավոր և այն ենթակա է նոտարական վավերացման

345. Ամուսնական պայմանագիր՝

ա) կքնելիս՝ դրանով սահմանված իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանափակվել որոշակի ժամկետով կամ կամ կախման մեջ դրվել որոշակի պայմանների վրա հասնելուց կամ հակառակը

բ) չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը

346. Երեխայի համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը սահմանվում է՝

ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և /կամ/ այլ եկամտի ¼

բ) երեք երեխայի դեպքում՝ կեսը

347. Նոտարը վավերացնում է՝

ա) քաղաքացիների կողմից ստորագրված բոլոր փաստաթղթերի պատճենների համապատասխանությունը բնօրինակին

348. Նոտարը կարող է հաստատել՝

ա) որ անձը ողջ է

349. Նոտարական գործողություններ կատարելիս նոտարի մոտ են թողնվում՝

ա) գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը՝ միայն դրանց ամբողջությամբ օտարելու գործարքներ վավերացնելու դեպքում

բ) շինության օտարման պայմանագրեր վավերացնելիս՝ հողամասի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերի բնօրինակները

350. Կտակ վավերացնելուց՝

ա) չեն կարող պահանջվել կտակվող գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքը հաստատող ապացույցներ

351. Վերալիազորման իրավունքով տրված լիազորագիրը՝

ա) ենթակա է նոտարական վավերացման՝ օրենքով սահմանված կարգով

բ) կարող է վավերացնել ցանկացած նոտար հիմնական լիազորագիրը ներկայացնելու դեպքում

գ) չի կարող տրվել հիմնական լիազորագրի ժամկետը գերազանցող ժամկետով

352. Վարձույթի պայմանագրով՝

ա) վարձատու կարող է հանդես գալ մշտական ձեռնարկատիրություն իրականացնող անձ

բ) հրապարակային պայմանագիր է

353. Վարձույթի պայմանագիրը կարող է կնքվել՝

ա) մինչև մեկ տարի ժամկետով

բ) վեց ամիս ժամկետով

354. Վարձույթի պայմանագրով՝

ա) վարձակալության հանձնված գույքի հիմնական և ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է Վարձատուն

355. Անհատույց օգտագործման պայմանագրով կողմերից յուրաքանչյուրը ՝

ա) կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել գույքի օգտագործման պայմանագրից մեկ ամիս առաջ ծանուցելով այդ մասին մյուս կողմին, եթե ծանուցման այլ ժամկետ սահմանված չէ պայմանագրով

356. Ձեռնարկատիրական գործունեության համար կնքված պայմանագրով համատեղ գործունեության պայմանագրի կողմեր են լինել՝

ա) առևտրային կազմակերպությունները և ձեռնարկատերերը, այդ թվում՝ այն ֆիզիկական անձինք, որոնք գյուղատնտեսական արտադրությամբ են զբաղվում

357. Համատեղ գործունեության պայմանագրով՝

ա) եթե համատեղ գործունեության պայմանագիրը կապված է դրա մասնակիցների կողմից ձեռնարկատիրական գործունեության հետ, ապա մասնակիցները համապարտ պատսխանատվություն են կրում բոլոր ընդհանուր պարտավորությունների համար՝ անկախ դրանց ծագման հիմքերից

բ) եթե համատեղ գործունեության պայմանագիրը կապված չէ դրա մասնակիցների կողմից ձեռնարկատիրական գործունեության հետ, ապա մասնակիցները պատսխանատվություն են կրում բոլոր ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար իրենց ամբողջ գույքով՝ ընդհանուր գործում իրենց իրենց ավանդի արժեքին համամասնորեն

358. Երաշխավորը՝

ա) իրավունք ունի պարտատիրոջ պահանջի դեմ անել այնպիսի առարկություններ նույնիսկ այն դեպքում, երբ պարտապանը ընդունել է պարտքը

359. Ինչ է նախավճարը՝

ա) նախավճար է համարվում այն դրամական գումարը, որը տալիս է մի կողմ մյուսին պայմանագրով հասանելիք վճարների հաշվին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում

360. Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնել՝

ա) կարող է տեղի ունենալ ինչպես գործարքով, այնպես էլ օրենքի հիման վրա

361. Որոնք չեն կարող անցնել այլ անձանց պահանջի զիջման դեպքում՝

ա) պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները

բ) հեղինակային իրավունքները

362. Օրենքի հիման վրա պարտատիրոջ իրավունքներն այլ անձի են անցնում՝

ա) պարտապանի երաշխավորի կողմից պարտապանի պարտավորության կատարման հետևանքով

բ) ապահովագրական դեպքը վրա հասնելիս պատասխանատու պարտապանի բկատմամբ պարտահիրոջ իրավունքները ապահովագրական հատուցում վճարած ապահովագրողին անցնելիս

363. Ինչ ձևով կարող է պահանջը զիջվել՝

ա) հասարակ գրավոր գործարքի վրա հիմնված պահանջը կարող է զիջվել ինչպես հասարակ գրավոր ձևով, այնպես էլ նոտարական վավերացումով

364. Պարտավորության մեջ անձանց փոփոխության որ պայմանն է թույլատրելի՝

ա) պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու դեպքում պարտապանի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով

բ) պարտապանը կարող է իր պարտքը փոխանցել այլ անձի առանց պարտատիրոջ համաձայնության, եթե օրենքով հատուկ սահմանված է դրա մասին

365. Նոտարի կողմից վավերացված կտակներին հավասարեցվում են՝

ա) ՀՀ դրոշի ներքո նավարկող նավերի վրա գտնվող քաղաքացիների կտակները վավերացված՝ այդ նավերի նավապետերի կողմից

366. Կտակարարի փոխարեն օրենքով սահմանված դեպքում կտակը չեն կարող ստորագրել՝

ա) հյուպատոսական հաստատության համապատասխան պաշտոնատար անձը

բ) օտարերկրացի անձը, որը հայերեն լեզվին չի տիրապետում

գ) կտակը ոչ վարժ կամ դժվարությամբ կարդացող անձինք

367. Անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում Գնորդը իրավունք ունի պահանջել՝

ա) կոմպլեկտավորելու ապրանքը ողջամիտ ժամկետում

368. Մատակարարման պայմանագիր կնքելիս ծագած տարաձայնությունները կարգավորելիս՝

ա) պայմանի համաձայնության վերաբերյալ առաջարկ ստացած կողմը պարտավոր է այն ստանալու պահից երեսունօրյա ժամկետում միջոցներ ձեռնարկի պայմանագրի համապատասխան պայմանը համաձայնեցնելու համար

369. Ապրանքի պիտանիության ժամկետը որոշվում է՝

ա) դրա պատրաստման օրվանից

370. Ինչն է պարտադիր սահմանել լիցենզային պայմանագրում՝

ա) վարձատրության չափի որոշման կարգը

բ) վարձատրության վճարման ժամկետները

գ) լիցենզիային պայմանագրով տրամադրվող իրավունքները և դրանց օգտագործման սահմանները

371. Մտավոր գործունեության արդյունք ստեղծելու և օգտագործելու պայմանագիրը պարտադիր պետք է սահմանի՝

ա) ստեղծվելիք մտավոր գործունեության արդյունքի բնույթը

բ) ստեղծվելիք մտավոր գործունեության արդյունքի օգտագործման եղանակները

372. Հեղինակային իրավունքի օբյեկտ չեն՝

ա) ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործությունները

բ) պաշտոնական փաստաթղթերը

գ) քաղաքական ելույթները, դատավարության ընթացքում արտասանված ճառերը

373. Հեղինակի գույքային իրավունքները գործում են՝

ա) հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո 70 տարի

374. Երբվանից է սկսում գործել հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետը՝

ա) մահվան հաջորդող տարվա հունվարի մեկից

375. Որ իրավունքը չի փոխանցվում ժառանգաբար՝

ա) հեղինակության իրավունքը

բ) հետկանչի իրավունքը

գ) անվան իրավունքը

376. Ով է իրավասու սահմանելու հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը՝

ա) ՀՀ կառավարությունը

377. Որոնք են որ նոտարի կողմից կազմվում են միայն հայերեն՝

ա) պետական գրանցում պահանջող բոլոր գործարքները

բ) ՀՀ տարածքում կիրառվող փաստաթղթերը

գ) Մտավոր սեփականության իրավունի ոլորտում կնքված լիցենզային պայմանագրերը

378. Վավերացման և հաստատման ենթակա չեն, ինչպես նաև նոտարական գործողության կատարման համար հիմք չեն ընդունվում այնպիսի փաստաթղթեր, որոնցում՝

ա) նշված չեն ամիս, ամսաթիվ, տարին

բ) առկա են մատիտով գրված մասեր

379. Վավերացվող գործարքներում, հետևյալ դեպքերում որոնք են լրիվությամբ գրելու պահանջ դրված նոտարի համար՝

ա) ֆիզիկական անձանց բնակության վայրը

բ) մինչև 18 տարեկան անձանց ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը

380. Նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթի վրա եղած...՝

ա) ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք ունեն լոկ համաձայնության բնույթ

բ) ֆիզկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ